ԼՂ հիմնախնդիրը եւ Եվրոպան

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Եվրոպական ազդեցությունը տարածաշրջանում ծավալման միտում ունի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական եւ թե՛ մշակութային տեսանկյուններից: Մեծ է դերը հատկապես հանրային կարծիքի ձեւավորման, հանրային գործելակերպի ուղղորդման առումով:

«Եվրոպա» եւ «փափուկ քաղաքականություն» եզրերն այսօր հաճախ են օգտագործվում իբրեւ համազորներ, իսկ «Եվրոպայի խոսքը» ազդեցիկ լինելու մեծ պաշար ունի այստեղ, քանզի Եվրոպան ինքն է ընկալվում որպես անաչառության զգալի ներուժ ունեցող գերխաղացող: «Եվրոպական դիրքորոշման» հետ այստեղ, ուզեն թե չուզեն, հաշվի են նստում, իսկ «Եվրոպական ցուցումն» այստեղ հաճախ որոշիչ կարող է լինել տարածաշրջանային, ներպետական, քաղաքական, տնտեսական եւ այլ հարթություններում:

Այդ դեպքում գիտե՞ն արդյոք «Եվրոպայում», թե հնարավոր ազդեցության ինչ ներուժ ունեն տարածաշրջանում, հաստա՛տ գիտեն: Գիտե՞ն արդյոք, որ նման պայմաններում բոլոր հնարավոր զարգացումների համար առնվազն բարոյական պատասխանատվության խնդիր է նաեւ կանգնում իրենց առջեւ, թերեւս գիտեն: Գիտե՞ն արդյոք, որ «Եվրոպայի հարեւան» համարվող փոքրիկ երկրում հիասթափության զգացումներ են արթնանում, գուցեեւ չգիտեն:

Ինչու՞ է լռում «Եվրոպան»

ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը վաղուց արդեն տարածական բազմակի չափումներ ունի: Բազմակի են հարթությունները, կողմերը, շահերը, սպասելիքներն ու մոտեցումները: Սակայն ակնկալիքները Եվրոպայից ուրիշ են, այլ հարթությունում են: Եվ խնդիրն այն չէ միայն, որ Հայաստանն ու Ադրբեջանը որդեգրել են եվրաինտեգրման ճանապարհը: Իրականում ռազմավարական շահերից, ամեն գնով լուծում տալուց կամ լոկ նպատակը կարեւորելուց անդին գտնվող մոտեցումների լոբբինգը մարդիկ ակամա սպասում են հենց Եվրոպայից: Մարդակենտրոն, մարդու եւ մարդկային ճակատագրերի, օրինակելի համարվող խաղի կանոններին հետեւելու մոտեցումների լոբբինգն են մարդիկ ակնկալում Եվրոպայից ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում:

Իսկ ի՞նչ ունենք իրականում.

- Ադրբեջանի դիրքորոշումն օրեցօր կոշտանում է, Եվրոպան չի արձագանքում:
- Պատերազմի հռետորությունն է ընդգծված ծավալում ստանում, Եվրոպան լռում է:
- Այլատյացությունն է ավելանում, հետեւողականորեն սերմանվում հանրային գիտակցության մեջ, կրկին լռություն:
- Մշակութային արժեքների բացահայտ ոչնչացում է տեղի ունենում՝ Եվրոպան էլի լռում է:

Ընկալման զուգահեռներ

Գաղտնիք չէ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները միշտ փորձ է արվում դնել միեւնույն նժարի վրա: Կողմերին հավասարեցնելու եւ «անկողմնակալություն» ցուցաբերելու Եվրոպական ձգտումն այնքան մեծ է, որ Եվրոպան փորձում է նաեւ հավասարություն տեսնել այնտեղ, որտեղ դա չկա: Նա հանդուրժում է, եւ դրանով իսկ խրախուսում է երեւույթներ, որոնք հակասում են եվրոպական արժեքներին: Եվրոպան իր լռությամբ հավասար նժարների վրա է դնում Ադրբեջանական պետական մակարդակով տարվող

Երեւան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

ռասիստական, այլատյացության քաղաքականությունը եւ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը: Եվրոպան իր լռությամբ հավասար նժարների վրա է դնում մշակութային արժեքների ոչնչացումը և ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը: Եվրոպան իր լռությամբ հավասար նժարների վրա է դնում Ադրբեջանի պատերազմական ու ատելության կոչերը և ԼՂ հակամարտության կարգավորման ջանքերը: Այն տպավորությունն է ստեղծվում, որ, ասենք, այլատյացության եւ ռասիզմի դեմ պայքարը կարող է վնասել ԼՂ հակամարտության լուծման գործընթացին:

Տարատեսակ միջոցառումներով, մեթոդներով ու խողովակներով իրականացվող եվրոպական արժեքների տարածումն իմաստազրկվում է մեզանում, քանի դեռ Եվրոպան ԼՂ հարցի շուրջ ընթացող գործընթացներին չի արձագանքում եվրոպական արժեքներին համապատասխան: Եվրոպան այսօր արձագանքում է լռությամբ: Լռություն, որ տարօրինակ է այնպիսի մարմնի կողմից, որն իր մաշկի վրա է զգացել ռասիզմի հետեւանքները: ԼՂ հակամարտությունը երբեք հնարավոր չի լինի կարգավորել այսօրվա ատելության մթնոլորտի շուրջը, իսկ Եվրոպան, իր լռությամբ նպաստում է այդ միջավայրի զարգացմանը ու դրանով իսկ ավելի մեծացնում հնարավոր պատերազմի վտանգը:

Եվրոպան պետք է որոշի, իր կողմից դավանած արժեքներն են կարեւոր, թե՞ ԼՂ հակամարտության շուրջ ձեւավորված դիվանագիտական խաղերը: Առայժմ Եվրոպան ընտրել է երկրորդ տարբերակը:

Արդյունքում

Բանակցային արվեստին վերաբերող ցանկացած դասագրքում կարելի է գտնել պարզ բանաձեւ՝ քննադատեք խնդիրը, բայց ոչ մարդուն: ԼՂ հակամարտության շուրջ ընթացող գործընթացների հանդեպ նրբանկատ ձեւանալը եւ հարաբերությունները փչացնելու ռիսկից դրդված լռելը իրականում լուծում չէ: Ընդհակառակը, դա ավելի է նպաստում ընթացող բացասական գործընթացներին եւ խանգարում ոչ միայն ԼՂ հակամարտության լուծմանը, այլեւ Եվրոպական արժեքների տարածմանը:

Լռելը նույնպես քաղաքականություն է, սակայն այդ դեպքում Եվրոպան այստեղ ընկալվում է որպես սեփական արժեքները դավաճանող մեկը, քանի որ այդ լռությունը նպաստում է այն արժեքների զարգացմանը, որոնց դեմ է Եվրոպան:

Համառոտագիրը մշակվել է ՄՀՄԿ 2007թ-ի նոյեմբերի 20-ին կայացած՝ «Կոնֆլիկտները և Եվրոպական արժեքները» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ: